

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 30

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
խորհրդի 02.06.2011թ. նիստի

խորհրդի 31 անդամներից ներկա էին 22-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 2010-2011թթ. ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:
2. Ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Ջարուհի Սարգսի Միքայելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
3. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011 ուսումնական տարվա լավագույն շրջանավարտներին ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար երաշխավորության հարցը:
4. Մաթեմատիկական անալիզի ամբիոնի դոցենտ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու Ա.Կ.Թասլաքյանի «Բարձրագույն մաթեմատիկայի խնդրագիրք» ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:
5. Մեխանիկայի ամբիոնի աշխատակիցներ ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածուներ Ե.Ս.Միրզոյանի և Ս.Յ.Ջիլավյանի «Առաձգականության տեսության խնդիրների ժողովածու» ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

1ա/ Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի բակալավրիատի 2010-2011թթ.

ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների
նախագահների հաշվետվությունները:

Ելույթ ունեցան «Մաթեմատիկա» մասնագիտությամբ պետական
հանձնաժողովի նախագահ ֆ.մ.գ.դ., պրոֆ.Յ.Մ.Յայրապետյանը,
«Մեխանիկա» մասնագիտությամբ պետական հանձնաժողովի նախագահ
ֆ.մ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ Ա.Ս.Ավետիսյանը, «Ակտուար մաթեմատիկա»
մասնագիտությամբ պետական հանձնաժողովի նախագահ տ.գ.դ., պրոֆ.
Վ.Յ.Թորոյանը:

«Մաթեմատիկա» մասնագիտությամբ պետական քննությունների
արդյունքներն են. 64 շրջանավարտներից 22 գերազանց, 17 լավ, 19
բավարար, 6 անբավարար:

«Մեխանիկա» մասնագիտությամբ պետական քննություններին 24 շրջանավարտներից 4-ը ստացել են գերազանց, 7 լավ, 13 բավարար գնահատականներ:

«Ակտուար մաթեմատիկա» մասնագիտությամբ 29 շրջանավարտներից 13-ը ստացել են գերազանց, 8-ը լավ, 8-ը բավարար գնահատականներ: Պետական քննությունները ցույց տվեցին, որ բակալավրիատի շրջանավարտները համապատասխան մասնագիտությամբ բակալավրի աստիճանի արժանանալու համար հիմնականում ունեն անհրաժեշտ գիտելիքներ, բայց նաև կան ուսանողներ, որոնք դժվարանում են կիրառել յուրացրած տեսական նյութը կոնկրետ օրինակների վրա: Շատ ուսանողներ աչքի ընկան փայլուն պատասխաններով և անհրաժեշտ է, որ նրանք մագիստրատուրայում լինեն դասախոսների ուշադրության կենտրոնում: Ավարտական աշխատանքները հիմնականում վերաբերվում էին նոր խնդիրների հետազոտություններին, կային նաև գիտական ուղղվածությամբ աշխատանքներ: Աշխատանքը ներկայացնելու համար ուսանողից պահանջվում է ուսումնառության տարիներին ստացած գիտելիքների կիրառում: Ռեֆերատային բնույթի աշխատանքները թույլ են տալիս ամրապնդել և խորացնել ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները: Նշվեց, որ ցանկալի կլիներ ավարտական աշխատանքների մեջ ընդգրկել ծրագրավորման տարրեր պարունակող թեմաներ: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են.

«Մաթեմատիկա» մասնագիտությամբ 64 շրջանավարտներից 63-ը ներկայացրեցին ավարտական աշխատանքներ՝ գերազանց 31, լավ 15, բավարար 17:

«Մեխանիկա» մասնագիտությամբ 24 շրջանավարտներ ներկայացրեցին ավարտական աշխատանքներ՝ գերազանց 10, լավ 4, բավարար 10:

«Ակտուար մաթեմատիկա» մասնագիտությամբ 28 շրջանավարտներից 19-ը ստացել են գերազանց, 6-ը լավ, 3-ը բավարար գնահատականներ: Արտահայտվեցին դեկան, պրոֆեսոր Ա.Ա.Սահակյանը, պրոֆեսորներ Է.Ա.Դանիելյանը, Յու.Մ.Մովսիսյանը, Ս.Վ.Սարգսյանը, դոցենտներ Ա.Կ.Թասլաքյանը, Կ.Ռ.Ավետիսյանը, Ս.Ջ.Ջիլավյանը: Նրանք նշեցին, որ քննությունները և ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցան բարձր մակարդակով, շրջանավարտների մի որոշակի մասը դժվարությամբ էր կարողանում ներկայացնել յուրացված նյութը և դա արդյունք է ուսումնառության ընթացքում բանավոր քննությունների պակասի: Նշվեց, որ եղան փայլուն պատասխաններով աչքի ընկած ուսանողներ: Բակալավրիատի շրջանավարտների մեջ կան զգալի թվով ուսանողներ, որոնք կարող են ուսումը շարունակել մագիստրատուրայում:

1բ/ Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011

թթ. ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների
նախագահների հաշվետվությունները:

Ելույթ ունեցան «Մաթեմատիկա» մասնագիտությամբ պետական
հանձնաժողովի նախագահ ֆ.մ.գ.դ., պրոֆ.Յ.Ս.Յայրապետյանը, «Մեխանիկա»
մասնագիտությամբ պետական հանձնաժողովի նախագահ ֆ.մ.գ.դ., ՅՅ ԳԱԱ
թղթ.անդամ Ա.Ս.Ավետիսյանը, «Ակտուար մաթեմատիկա» մասնագիտությամբ
պետական հանձնաժողովի նախագահ տ. գ.դ., պրոֆ. Վ.Յ.Թորոյանը:

«Մաթեմատիկա» մասնագիտությամբ պաշտպանվեցին 31 մագիստրոսական
թեզեր. արդյունքները` 19 գերազանց, 11 լավ, 1 բավարար: «Մեխանիկա»
մասնագիտությամբ պաշտպանվեցին 14 մագիստրոսական թեզեր.
արդյունքները` 13 գերազանց, 1 բավարար: «Ակտուար մաթեմատիկա»
մասնագիտությամբ պաշտպանվեցին 18 մագիստրոսական թեզեր.
արդյունքները` 7 գերազանց, 6 լավ, 5 բավարար: Նշվեց, որ աշխատանքների
մի զգալի մասը ունեն գիտական բարձր մակարդակ, և որոշ աշխատանքներ
կարելի է ներկայացնել հրատարակման: Շրջանավարտները իրենց
աշխատանքները ներկայացնում էին վստահ, ցուցաբերելով խորը
գիտելիքներ: Նրանք արժանի են համապատասխան մասնագիտությամբ
մագիստրոսի աստիճանին, իսկ նրանց մեջ էլ կան շրջանավարտներ, որոնք
ունեն բոլոր նախադրյալները ուսումն ասպիրանտուրայում շարունակելու և
որակյալ մասնագետ դառնալու համար: Կային կիրառական բնույթի
աշխատանքներ և հետազայում էլ մագիստրոսական թեզերը պետք է ունենան
կիրառական նշանակություն, կարևոր պետք է լինեն խնդրի դրվածքը և
մաթեմատիկական մոդելավորման հիմնավորումները:

Արտահայտվեցին դեկան, պրոֆեսոր Ա.Ա.Սահակյանը, պրոֆեսորներ
Է.Ա.Դանիելյանը, Յու.Ս.Մովսիսյանը, Ս.Վ.Սարգսյանը, դոցենտներ
Ա.Կ.Թասլաքյանը, Կ.Ռ.Ավետիսյանը, Ս.Յ.Ջիլավյանը: Նրանք նշեցին, որ
մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցան բարձր
մակարդակով, որը հիմք է տալիս պնդելու, որ ֆակուլտետում ուսանողները
ստանում են որակյալ կրթություն և կայուն գիտելիքներ: Շատերը ի վիճակի են
ուսումը շարունակելու ասպիրանտուրայում և դառնալ որակյալ
մասնագետներ:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի խորհուրդը միաձայն

Որոշեց – Ընդունել պետական քննական հանձնաժողովների նախագահների
հաշվետվությունները:

2. Lutghin - Ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու
Զարուհի Սարգսի Միքայելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու
երաշխավորության հարցը:

Ներկայացվեց ֆունկցիաների տեսության ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի նիստի
արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Ջ.Ս.Միքայելյանը
երաշխավորվում է դոցենտի կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ
ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Զարուհի Սարգսի Միքայելյանի կողմից ներկայացված
փաստաթղթերը բավարարում են պահանջվող պայմաններին և նա
երաշխավորվում է դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ միաձայն (22 կողմ, դեմ չկա),

Որոշեց - Երաշխավորել ֆունկցիաների տեսության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ. գիտ.
թեկնածու Զարուհի Սարգսի Միքայելյանին դոցենտի գիտական կոչում ստանալու
համար:

3. Lutghin - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011
ուսումնական տարվա լավագույն շրջանավարտներին ասպիրանտուրայում
ուսումը շարունակելու համար երաշխավորության հարցը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի
շրջանավարտներ

1. Տիգրան Ալեքսանդրի Գալիչյանին
2. Արարատ Արթուրի Պապյանին
3. Անդրանիկ Արմենի Քամալյանին
4. Նարեկ Մակարի Մելքոնյանին
5. Արմեն Ռոբերտի Նուրբեկյանին
6. Կարեն Ռուբենի Մուրադյանին

Երաշխավորել ուսումն ասպիրանտուրայում շարունակելու համար:

4. Lutghin - Մաթեմատիկական անալիզի ամբիոնի դոցենտ, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու
Ա.Կ.Թասլաքյանի «Բարձրագույն մաթեմատիկայի խնդրագիրք» ուսումնական
ծեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:

Ներկայացվեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի
խորհուրդը երաշխավորում է ուսումնական ծեռնարկը ներկայացնել
հրատարակման: Նշվեց ուսումնական ծեռնարկի կարևորությունը ուսումնական
գործընթացում և նման ծեռնարկի անհրաժեշտությունը բնագիտական և
հումանիտար ֆակուլտետներում:

Որոշեցին - Ա.Կ.Թասլաքյանի «Բարձրագույն մաթեմատիկայի խնդրագիրք» ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

5.Լսեցին – Մեխանիկայի ամբիոնի աշխատակիցներ ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածուներ Ե.Ս.Միրզոյանի և Ս.Յ.Ջիլավյանի «Առաձգականության տեսության խնդիրների ժողովածու» ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը: Ներկայացվեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի խորհուրդը երաշխավորում է ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման: Ներկայացվեց մախանիկայի ամբիոնի որոշումը ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Նշվեց ուսումնական ձեռնարկի կարևորությունը ուսումնական գործընթացում և նման ձեռնարկի անհրաժեշտությունը:

Որոշեցին - Ե.Ս.Միրզոյանի և Ս.Յ.Ջիլավյանի «Առաձգականության տեսության խնդիրների ժողովածու» ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

6.Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ուսանողների գիտական աշխատանքները ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում հրատարակման հարցը:

Որոշեցին - Երաշխավորել մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Գեղամ Արտավազդի Շախբազյանի և Յայկազ Արմենի Ղազարյանի «Սահքի հարթ էլեկտրաառաձգական ալիքի դիֆրակցիան կիսաանվերջ մետաղական շերտի վրա պիեզոէլեկտրական կիսատարածությունում» աշխատանքը հրատարակել ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Յ.Ջիլավյան